



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

14 դեկտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Ա. Խաչատրյանի

Ա. Թունյանի

Քննության առնելով Սիմոն Էլչյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Սիմոն Էլչյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը սահմանադրական դատարան է մուտքագրվել 2015թ. նոյեմբերի 23-ին)՝ խնդրելով.

«ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի «որոնց համար վերաքննություն օրենքով նախատեսված չէ» դրույթը՝ լուծարային կառավարչի գործողությունների դեմ բերված բողոքների վերաբերյալ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի վերաքննության համատեքստում»:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ.

1. Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը սահմանափակում է լուծարային կառավարիչների գործողությունների դեմ ներկայացված բողոքների կապակցությամբ առաջին աստյանի դատարանների կողմից կայացված դատական ակտերի վերաքննության կարգով բողոքարկման իրավունքը:

Ըստ դիմողի՝ նման իրավական կարգավորումը նենգափոխում է դատական պաշտպանության և արդարադատության մատչելիության իրավունքի էությունը՝ խաթարելով դրա բովանդակությունը:

2. Դիմողը պնդում է, որ վիճարկվող նորմը սահմանափակում է դատական ակտը բողոքարկելու իր իրավունքը: Դիմողի կողմից վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների սպառիչ ցանկը՝ միաժամանակ ուրվագծելով այն ակտերի շրջանակը, որոնք համապատասխան սուբյեկտները կարող են վիճարկել վերադաս դատարանում: Արդյունքում՝ դիմողի իրավունքները վերաքննիչ բողոք ներկայացնելու առումով սահմանափակվել են ոչ թե քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ նախատեսված և նրա կողմից վիճարկվող իրավակարգավորման պատճառով, այլ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով նախատեսված իրավակարգավորման արդյունքում: Մասնավորապես, նշյալ օրենքի՝ «Պահանջների բավարարման հերթականությունը» վերտառությամբ 31-րդ հոդվածը, ի թիվս այլնի, ամրագրում է, որ լուծարային կառավարչի կողմից պարտատիրոջ պահանջները մերժելու կամ դրանք քննարկելուց խուսափելու դեպքում մինչև բանկի լուծարման հաշվեկշռի հաստատումը պարտատերն իրավունք ունի բողոքարկել լուծարային կառավարչի գործողությունները: Ընդ որում, դատարանի վճիռն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Այս համատեքստում դիմողի կողմից վիճարկվող դրույթների և նրա համար առաջացած իրավական հետևանքների միջև բացակայում է պատճառահետևանքային կապը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 որոշման մեջ

արտահայտված իրավական դիրքորոշման՝ անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետով, 69-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Միմոն Էլչյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

14 դեկտեմբերի 2015 թվականի
ՄԴԴԿՈ/ 1-28